


Մահագրու թիւն

ԱՐԱՄ Մ. ԻՆՃԻԿԵԱՆ

(1910-1975)



Արամ Ինճիկեան ծնած է Ախալցխա, 1910 թ.ին։ Միջնակարգ ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ ետք, որպէս ուսուցիչ կը պաշտօնավարէ Խնձորեսկի եւ Դսեղի գաւրոցներուն մէջ, եւ ապա՝ նոյն պաշտօնով կ'անցնի Ախալցխա, ուր, հետակայ կարգով միաժամանակ կը շարունակէ իր ուսումը։ Երեւանի Մանկավարժական Հիմնարկի լեզուի եւ գրականութեան բաժանմունքի ընթացքը աւարտելէ ետք, 1934 թ.ին, կը մտնէ Երեւանի Պետական Համալսարանի ասպիրանդական բաժինը, իսկ 1937 թ.ին, որպէս գիտաշխատող, կ'անցնի Երեւանի Պատմութեան եւ Գրականութեան Հիմնարկը։ 1938-1946 թթ.ուն, որպէս սովետահայ բանակային, կը մասնակցի Համաշխարհային Բ. Պատերազմի մարտերուն։ 1946 թ.ին, զօրացրուելէն ետք, մինչեւ իր մահը ան կը պաշտօնավարէ ՀՍՍՀ ԳԱ Մանուկ Աբեղեանի սնունդի Գրականութեան Հիմնարկին մէջ։

Գրագէտ-քննադատ, գիտութեան վաստակաւոր զործիչ, Բանասիրական Գիտութիւններու Դոկտոր, Արամ Ինճիկեան կը հանդիսանայ նոր եւ ժամանակակից հայ գրականութեան ամենէն հմուտ եւ

ձեռնհաս զբաղանալիություններէն մէկը: Իր անուան կապուած կը մը-
նայ դասական շարք մը զբողներու՝ Մ. Նալբանդեանի, Ռ. Պատկան-
եանի, Յովհ. Թումանեանի, Յ. Պարոնեանի, Յ. Յովհաննիսեանի
երկերուն աղագեմական հրատարակութիւնը:

Ա. Ինճիկեան հեղինակն է բաղմամբիւ հետազոտութիւններու
և մենագրութիւններու: Անոր զբնիւ կը պատկանին հայ նոր զբա-
ղանութեան դասական ներկայացուցիչներու՝ Ղ. Ալիշանի, Ռ. Պատ-
կանեանի, Ս. Պեչիկթաշլեանի, Ս. Շահազիզի, Ալ. Ծատուրեանի և
Սիամանթոյի նուիրուած շարք մը հետազոտութիւններ, ինչպէս նա-
և՝ «Լերմոնտովը և Հայ Վաթնունականները», «Բեկինսկին Հայ
Գրականութեան Մէջ», «Չերնիշևսկու և Նալբանդեանի Գաղափա-
րական Կապերի Հարցին Շուրջը» ուսումնասիրութիւնները:

Ա. Ինճիկեանի աշխատասիրութիւններէն առանձին հատորով
լոյս տեսած են ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ (Երևան, 1940), ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼ-
ԲԱՆԴԵԱՆԻ ԿԵԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆԸ
(Երևան, 1954), ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ (Երևան, 1955), ՄՏԵՐԻՄՆԵՐ
ԵՒ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ (Երևան, 1967), ՅՈՎՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ (Ե-
րևան, 1969), ԱԻ. ԻՍԱՀԱԿԵԱՆ (Երևան, 1977):

Ա. Ինճիկեան կը մահանայ 1975 թ. ի Մարտին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

(1882-1975)



Բժիշկ Յ. Տէր Ղազարեան ծնած է Մարաշ, 1882 թ.ին: Ծննդա-
վայրին Ս. Սարգիս եկեղեցիի թաղային վարժարանին մէջ իր նախ-
նական ուսումը ստանալէ ետք, 1896-1901 թթ.ուն կ'ուսանի Տարսո-
նի Ամերիկեան Գոլէճին մէջ: 1902 թ.ին կ'անցնի Պէյրութ, ուր կը

Հետեւի Ամերիկեան Համալսարանի Բժշկագիտական Դպրոցի դասընթացներուն, ուրկէ վկայուելէ ետք կը վերադառնայ Մարաշ, եւ որպէս օգնական վիրարոյժ կը ծառայէ տեղւոյն Գերմանական Հիւանդանոցին մէջ: Համալսարանային Ա. Պատերազմի տարիներուն կը կոչուի նոյն Հիւանդանոցի բժշկապետի, եւ Մարաշի թուրք զինուորներու վիրարութապետի ղոյգ պաշտօններուն: Հետագայ տարիներուն՝ Գերմանիոյ մէջ իր ասպարէզին ճամբով մասնագիտական ուսման հետեւելէ ետք, կ'անցնի Հալէպ, եւ ուր կը մնայ մինչեւ իր մահը, ծառայելով իբրեւ բժիշկ:

Անկախ իր մասնագիտական ասպարէզէն, Բժ. Յ. Տէր Ղազարեան կը նուիրուի Կիլիկիոյ տեղագրութեան եւ պատմութեան ուսումնասիրութեան: Այս զծով ան բաղմաթիւ յօդուածներ կը ստորագրէ Սուրիոյ եւ Լիբանանի հայ մամուլին մէջ, եւ կ'աշխատակցի «Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն» (Նիւ. Եորք, 1934) հատորին, «Մարաշի Հայ Աշուղներն ու Գրադէտները» (էջ 535-567) սերտողութեամբ, եւ Մարաշ քաղաքի՝ իր պատրաստած քարտէսով: Ապա՝ առանձին հատորով մամուլին կը յանձնէ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱ-ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ (Անթիլիաս, 1966), որ կը հանդիսանայ իր վերջին խօսքը այդ ուղղութեամբ տարած աշխատանքներուն:

Բժ. Յարութիւն Տէր Ղազարեան կը մահանայ 1975 թ.ի Ապրիլի 15-ին:



ՏԻԳՐԱՆ Ծ. ՊՈՅԱԶԵԱՆ

(1895-1975)

Տիգրան Ծ. Պոյաճեան ծնած է Բալուի Արմուճան գիւղը, 1895 թ.ին: Նախակրթութիւնը կը ստանայ ծննդավայրի ու շրջանի գիւղական դպրոցներուն մէջ, որոնց վերջինը կը հանդիսանայ Տիարպե-

քերի հայ կաթողիկէ վարժարանը: 1910 թ.ին կ'անցնի Փրավիտենս (ԱՄՆ): Մէկ քանի տարիներ տարբեր արհեստներու հետեւելէ ետք, 1913 թ.ին կը մտնէ տեղւոյն Գլասիգըլ երկր. Վարժարանը, որուն ընթացքը աւարտելէ ետք, կը դառնայ Պրատն Համալսարանի ուսանող, ապա՝ կ'անցնի Պոսթոն, ուր կը հետեւի նոյնանոյն Համալսարան-Գոլէճի դասընթացներուն: 1917 թ.ին կը միանայ Կիլիկիոյ ազատագրման համար կազմուած կամաւորական դունդերուն: Կիլիկիոյ դրաւումէն ետք, 1919 թ.ին կ'արձակուի բանակէն, եւ սակայն տակաւին շրջան մը կը մնայ Կիլիկիա, տեղւոյն վրայ ուսումնասիրելու համար Կիլիկիա վերադարձող հայ դաշականներու վիճակը: Նոյն թուականի Հոկտեմբերին կը վերադառնայ ԱՄՆ, Կիլիկիոյ հայոց պաշտօնակութեան համար հանգանակութիւն կատարելու: Դէպքերու ընթացքը սակայն կը խափանեն իր Կիլիկիա վերադարձը: 1920 թ.ին Տ. Պոյաճեան կը սկսի հետեւիլ Նորթուեսթըրն Համալսարանի իրաւագիտութեան դասընթացներուն, զորս կ'աւարտէ 1924 թ.ին, արժանանալով Պսակաւոր Իրաւագիտութեան տիտղոսին: Յաջորդ տարին ան կ'աւարտէ Պոսթոն Համալսարանի Իրաւագիտութեան Դոկտորոցի ընթացքը, ու կը տիրանայ Մագիստրոս Իրաւագիտութեան աստիճանին:

Իրաւաբանական իր ասպարէզին կողքին, զոր ան ի դորձ կը դնէ Ուոթըրթաունի (Մես.) մէջ, Տ. Պոյաճեան կը նուիրուի ազգային հասարակական գործունէութեան: Հրապարակագրութեան հետ միատեղ, ան կը լծուի հայ ժողովուրդի պատմութեան ու մշակոյթի հարցերու պրպտումին: Իր թարգմանութեամբ անգլերէն լեզուով կը հրատարակուի Եղիշէի ՎԱՄՆ ՎԱՐԴԱՆԱՅ ԵՒ ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (Նիւ Եորք, 1952) երկը, որուն արեւմտահայերէն թարգմանութիւնը, կատարուած Յովհ. Մովսիկեանի կողմէ, լոյս կը տեսնէ վերոյիշեալ անգլերէն թարգմանութեան հետ միատեղ, նոյն կողքի տակ: Առանձին հատորով Տ. Պոյաճեան կը հրատարակէ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԵՆԸ - ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ (Ուոթըրթաուն, 1965), եւ անգլերէն լեզուով՝ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՄՈՌՑՈՒԱԾ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ ՊԱՐԱԳԱՆ (Նիւ Ճըրջի, 1972), ընդարձակ վաւերագրային ուսումնասիրութիւնը:

Տիգրան Պոյաճեան կը մահանայ 1975 թ.ի Մայիսի 2-ին:



ԳԵՈՐԳ Ա. ՍԱՐԱՖԵԱՆ

(1889–1975)

Գ. Ա. Սարաֆեան ծնած է Այնթապ, 1889 թ.-ին։ Նախնական եւ երկրորդական ուսումը կը ստանայ տեղւոյն Վարդանեան Կրթարանին մէջ, որուն ընթացքը աւարտելէ անմիջապէս ետք, ուսուցչական պաշտօնով կը հրաւիրուի նոյն հաստատութեան կողմէ։ 1910 թ.-ին կ'անցնի Պոսթոն (ԱՄՆ), ուր մուտք կը գործէ Պրիմոթորի Պետական Ուսուցչանոցը, որուն ընթացքը աւարտելէ ետք կը նուիրուի ուսուցչական ասպարէզին։ 1923 թ.-ին կը նշանակուի Գալիֆորնիոյ Լա Վեռն Գոլէճի օտար լեզուներու եւ գրականութեան ուսուցչապետ։ 1929 թ.-ին Հարաւային Գալիֆորնիոյ Համալսարանէն կը վրկայուի Դոկտոր ֆիլիսոփայութեան աստիճանով։ Յաջորդող տարիներուն, Գ. Սարաֆեան նախ կը վարէ Հարաւ. Գալիֆորնիոյ Համալսարանի մանկավարժական բաժանմունքի ուսուցչապետութիւնը, եւ ապա՝ մինչեւ 1950 թ.-ը նոյն համալսարանին Ուսուցչանոցի վարիչ տնօրէնի պաշտօնը։

Մանկավարժական իր ասպարէզին զուգահեռ, Գ. Սարաֆեան նաեւ կը զբաղի հրապարագրութեամբ, ինչպէս նաեւ մանկավարժական-հոգեբանական հարցերու ուսումնասիրութեամբ։ Որպէս խմբագիր կամ յօդուածագիր ան կ'աշխատակցի Պոյսոյ Արեւիք-ին, Պոսթոնի Այգ-ին, Նիւ Եորքի Կոչմակ-ին, Գալիֆորնիոյ Նոր Կեանք-ին։

Մանկավարժական ու հոգեբանական հարցերու նուիրուած իր հատորներէն անկախ, Գ. Սարաֆեան անդերէն լեզուով կը հրատարակէ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ, ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Լա Վեռն Լիւրը, 1930) ուսումնասիրութիւնը, որ 1953 թ.ին, Պուէնոս Այրէսի մէջ կը վերահրատարակուի սպաներէն լեզուով, ինչպէս նաեւ կ'աշխատասիրէ ու կը լոմբայրէ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆԹԷՊԻ ՀԱՅՈՑ Ա. Է. Բ. հատորները (Լոս Անճելոս, 1953) :

Գ. Սարաֆեան կը մահանայ 1975 թ.ի Յունիսի 6-ին :



ԼՈՒԴՄԷԼԱ ՄՈՏԱԼՈՎԱ

(1935—1975)

Լուդմիլա Մոտսլովա ծնած է Օլոմոուց (Չեխոսլովաքիա), 1935 թ.ին : Փրակայի Կարելի Համալսարանի բանասիրութեան բաժանումներին մէջ՝ յունարէնի, հին սլաւոներէնի, լատիներէնի, լեհերէնի, անգլերէնի ու ռուսերէնի հետ միատեղ ան կ'ուսումնասիրէ հայերէն լեզուն, աշակերտելով ականաւոր լեզուաբան Եարամիտ Եղիշկայի : 1959 թ.ին, աւարտելով համալսարանի դասընթացը, ան պաշտօնի կը կոչուի Չեխոսլովաքիայի ԳԱ Արեւելագիտութեան Հիմնարկին կողմէ, եւ ուր կը շարունակէ թարգմանչական ու գիտահետազոտական իր աշխատանքները, մինչեւ իր կանխահաւ մահը :

Հայ գրականութեան ու հայ մշակոյթի հետ Լուդմիլա Մոտսլովայի առաջին լուրջ հանդիպումը տեղի կ'ունենայ 1955 թ.ին, երբ չեխերէնի կը թարգմանէ Ա. Իսահակեանի «Լիլիթ» պատմուածքը : Յաջորդ երկու տասնամեակներուն, աւելի քան տասը հատորներ հայերէնէ կը թարգմանէ չեխերէնի. — Ա. Իսահակեանի «Ինչու՞ն է ըմբոսկրանքը» պատմուածքներու ժողովածուն (1958 թ.), Եղիշէ Չաբենցի «Քաղցր ու Հրեղէն Աշխարհ» բանաստեղծութիւններու ժողովածուն (1962 թ.) — Բանաստեղծներ Օլբրիխ Վիհլիգալի եւ Եա-

րոսլաւ Տաֆելի դործակցութեամբ —, Ալսել Բակունցի պատմութեաները (1966 թ.), Գէորգ Արշակեանի «Թրաշուշաններ» վիպակը (1966 թ.), Աւ. Իսահակեանի «Արու Լալա Մահարի» (1966 թ.) — Վլադիմիր Հոլանի դործակցութեամբ, Մ. Արմէնի «Յեղնար Աղբիւր» վիպակը՝ արժանացած երկու հրատարակութեան, (1968 եւ 1973 թթ.), Յովհաննէս Թումանեանի «Ախթամարը» (1969 թ.), Պարոյր Սեւակի «Հիմն Լոյսի» բանաստեղծութիւններու ժողովածուն (1971 թ.), հայկական ժողովրդական հէքիաթներու երկու հատորներ՝ «Կարմիր-Կանաչ-Սպիտակ Խնձորներ» եւ «Կախարդական Վարդ» (1972 թ.), Հրանդ Մաթէւոսեանի «Օգոստոս», «Ալիս» եւ «Երկրի Ջրը» վիպակները (1973 թ.), Զորայր Խալափեանի «Որտեղ էիր Մարդ Աստուծոյ» վէպը (1975 թ.), եւլն.:

Թարգմանչական իր այս բեղուն դործունէութեան զուգահեռ, Լոււմիլա Մոտալովա կը նուիրուի նաեւ հայ դրականութեան եւ մշակոյթի հարցերու ուսումնասիրութեան աշխատանքին: Այս դժով յիշատակութեան արժանի են «Սայաթ Նովա — Երրիշ Իմաստութեան ու Քնքանքի» (1963 թ.), «Մի քանի Դիտողութիւններ Իսահակեանի Բառապաշարի մասին» (հայերէն, 1965), «Հայ Պրոլետարական Դրականութեան Հիմնադիր Յակոբ Յակոբեան» (1966 թ.), «Հայ Դրականութեան Դասական Աւանդութիւնները» (1974 թ.), «Հողի Ուժը» (1974 թ.) — նուիրուած Հրանդ Մաթէւոսեանի դրականութեան, — յօդուածներն ու ուսումնասիրութիւնները:

Տակաւին՝ Լ. Մոտալովայի զբիւն կը պատկանին «Ասիայի եւ Ամերիկէի Գրողներու Բառարան»ի (երկու հատոր, 1967 թ.), հայ գրողներու նուիրուած քառասունեօթը յօդուածները, «Արեւելեան Դրականութիւններու Բառարան»ի (անգլերէն լեզուով, Լոնտոն, 1967 թ.) հայ դրականութեան նուիրուած յիսունէ աւելի յօդուածները, «Մովետական Միութեան Ժողովուրդներու Գրողներու Բառարան»ի (1966 թ.) յետ-յեղափոխական շրջանի հայ գրողներու նուիրուած աւելի քան վաթսուն յօդուածներ, եւլն.:

Լ. Մոտալովա լուրջ հետաքրքրութիւն ցուցաբերած է նաեւ արդի հայ դեղանկարչութեան նկատմամբ: Այդ դժով անոր գրչին արդասիւքն են արդի հայ նկարչութեան մեծ վարպետներու՝ Մարտիրոս Սարեանի (1961 թ.), Զոտտոյի — Գէորգ Գրիգորեան — (1965 թ.), եւ Մինաս Աւետիսեանի (1968 թ.) նուիրուած առանձին ուսումնասիրութիւնները, որոնցմէ վերջին երկուքը լոյս տեսած են չեխերէն եւ անգլերէն լեզուներով:

Լոււմիլա Մոտալովա կը մահանայ 1975 թ.-ին:

ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐԵԱՆ

(1907–1976)



Կ. Ղաֆադարեան ծնած է Ախալցխա, 1907 թ.ին: Ծննդավայրի միջնակարգ դպրոցը աւարտելէ ետք, 1927 թ.ին կը մտնէ Երեւանի Պետական Համալսարանը, որպէս պատմութեան ուսանող: 1931 թ.ին, Համալսարանական ուսումը աւարտելէ ետք, Կ. Ղաֆադարեան կը նշանակուի Էջմիածնի Զեռագրատուն–Մատենադարանի գլխավոր աշխատող: 1932 թ.ին կը տեղափոխուի ՀՍՍՀ–ի մշակոյթի պատմութեան հիմնարկի (հետագային՝ Պատմութեան եւ Գրականութեան Հիմնարկ), ուր իր ամբողջ ժամանակը կը տրամադրէ Հայաստանի պատմագիտական յուշարձաններու ուսումնասիրութեան:

1940–1965 թթ.ուն, Կ. Ղաֆադարեան կը ստանձնէ Հայաստանի Պետական Պատմական Թանգարանի վարիչի պաշտօնը: Ամբողջ երեսուն տարի, սկսած 1946 թ.էն ան կը ղեկավարէ Դուինի պեղումներուն աշխատանքը, եւ սկսած 1960 թ.ի Փետրուարէն, մինչեւ իր մահը, կը գլխավորէ ՀՍՍՀ–ի Գիտութիւններու Ակադեմիայի հնագիտութեան եւ ազգագրութեան հիմնարկի հին եւ միջնադարեան հնագիտութեան բաժինը, իսկ վերջինս երկու մասի բաժնուելէ ետք՝ միջնադարեան հնագիտութեան բաժնի աշխատանքները: 1965 թ.էն մինչեւ իր մահը, ան նաեւ անդամ է Պատմա–Բանասիրական Հանդէս–ի խմբագրական կազմին:

Իր երկարամեայ անրասիր, հաւատաւոր եւ բազմաբեղուն աշխատանքին որպէս ղեաւատնք, Կ. Ղաֆադարեան կը պարգեւատրուի «Աշխատանքային Կարմիր Դրօշ»ի եւ «Պատուոյ Նշան»ի շքանշաններով, իսկ 1975 թ.ին Ակադեմիայի բարձրագոյն գնահատականին՝ «Մեծարման Գիր»ին:

Կ. Ղաֆադարեանի խմբագրութեամբ, ու մասնաւոր ջանքերով, 1942 եւ 1948 թթ-ուն յաջորդականօրէն լոյս կը տեսնեն հայ ճարտարապետութեան մեծախառնակ ուսումնասիրող թորոս թորոմանեանի «Նիւթեր հայ ճարտարապետութեան Պատմութեան» մեծածաւալ հատորները:

Հայկական ճարտարապետութեան, հայերէն Վիճազիր արձանագրութիւններու, հնագիտութեան եւ քննահանրապէս հայագիտութեան նուիրում իր մէկ քանի տասնեակ դիտական յօդուածներէն անկախ, առանձին հատորներով լոյս կը տեսնեն Կ. Ղաֆադարեանի հետեւեալ աշխատասիրութիւնները. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԻ ՍԿԸԶԲՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, (Երևան, 1939), ԱԼՔԻՄԻԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (Երևան, 1940), ՅՈՎՀԱՆՆԱՎԱՆՔԸ ԵՒ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Երևան, 1948), ԴՈՒՐՆ ՔԱՂԱՔԸ ԵՒ ՆՐԱ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ, 1937-1950 (Երևան, 1957), ՍԱՆԱՀԻՆ ՎԱՆՔԸ ԵՒ ՆՐԱ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Երևան, 1959), ՀԱՂԲԱՏ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՈՒԱԾՔՆԵՐԸ ԵՒ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Երևան, 1963), ԵՐԵՒԱՆ. ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՒ ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ (Երևան, 1975):

Կ. Ղաֆադարեան կը մահանայ 1976 թ.ի Սեպտեմբերի 20-ին:



ԿԱՄՍԱՐ ԱԻԵՏԻՍԵԱՆ

(1904-1976)

Կամսար Աւետիսեան ծնած է չին Պայպիտ, 1904 թ.ին: Իր նախնական ուսումը ծննդավայրի նախակրթարանին մէջ ստանալէ ետք, 1915 թ.ին Կ'անցնի Թիֆլիս, ուր կը մտնէ տեղի Ներսիսեան դպրոցը: 1932-1937 թթ-ուն Կ'ուսանի Երևանի Պետական համալսարան-

նի աշխարհագրությունը լատանմունքին մէջ, որուն ընթացքը աւարտելէ ետք կը նուիրուի ուսուցչական ասպարէզին: 1974 թ.ին «Արեւմտեան Հայաստանի Բնաշխարհը» աւարտաճառով կ'արժանանայ 'Իոկտոր Փիլիսոփայութեան Աշխարհագրական Գիտութիւններու տիտղոսին:

Իբրեւ դասախօս Կ. Աւետիսեան կը պաշտօնավարէ Խաչատուր Աբովեանի անուան Մանկավարժական Հիմնարկի, Գիւղատնտեսութեան Կաճառի ու 1964-1974 թթ.ուն՝ Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի Լսարանական բաժնին մէջ, աւանդելով ընդհանուր աշխարհագրութիւն եւ Հայաստանի աշխարհագրութիւնը առարկաները:

Վերջին տասնամեակներուն մէջ հրատարակած՝ աշխարհամասերու, եւ առանձին երկիրներու աշխարհագրութեան նուիրուած Կ. Աւետիսեանի բազմաթիւ հատորներուն, ինչպէս նաեւ Հայաստանի աշխարհագրութեան նուիրուած իր տասնեակներով յօդուածներուն մէջ առանձին ուշադրութեան կ'արժանանան ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆԸ (Երեւան, 1969), եւ ցարդ անտիպ՝ ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ:

Կ. Աւետիսեան կը մահանայ 1976 թ.ի Հոկտեմբերի 24-ին:

ԽՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ